## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-26/41 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **07 օգոստոսի 2026թ.**

2026թ. հուլիսի 31-ից օգոստոսի 07-ը ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 հասցեում գտնվող «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ համակարգչային սարքավորումների ձեռքբերման թիվ ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-26/41 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ն. Սուքիասյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ, |
| Վ. Սանթուրյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի գլխավոր ֆինանսիստ, |
| Ա. Երիցյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի պետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ն. Սուքիասյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Լ. Հայրապետյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից և նիստին էլ մասնակցել են բոլոր երեք անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների, աճուրդի առաջարկված մեկնարկային գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընթացակարգին հայտ ներկայացված մասնակիցների և ներկայացված հայտերը գնահատելու մասին:
3. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
4. Ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ որոշելու մասին:
5. Համակարգի միջոցով գեներացված հայտարարություն/ներ/ի և անգործության ժամանակահատված կիրառելու կամ չկիրառելու մասին:

6. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

7. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ, ԱՃՈՒՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. հուլիսի 31-ին, ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 հասցեում գտնվող «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի շենքում ժամը 10:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված, տեղեկացրեց, որ գնման գործընթացն իրականացվում է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և հրապարակեց գնման հայտով սահմանված ձեռքբերվող գնման առարկա/ներ/ի գնման գին/գները.

ՀՀ դրամ

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Աճուրդի մեկնարկային գին | Մեկնարկ | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| 1-ին | Համակարգիչ՝ լրակազմով | 1000000 | 03.08.2026 10:00 | 3800000 |
| 2-րդ | Մոնիտոր | 74777 | 03.08.2026 10:00 | 90000 |

Ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՄԵՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև Մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցե, հեռ. | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| 1 | «China trade» LLC | - | - | - |
| 2 | «ՄՄՄ Տեխ» ՍՊԸ | ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ջրվեժ, 26/11, 077022080 | mmmtecham@gmail.com | 03578835 |
| 3 | «ՖԵՆԻՔՍ ՕՆ» ՍՊԸ | ք.Գյումրի, Անկախության Հրապարակ, Շ 9Ա, 093199337 | feniixon@gmail.com | 05569077 |
| 4 | «ԼԱԳԱ 1820» ՍՊԸ | գ. Արամուս, Երիտասարդական 2փ. 43 տ., 055333085 | laga1820llc@gmail.com | 03590908 |
| 5 | «ԻՁԻԹԵՉ» ՍՊԸ | ք. Երևան, Շարուրի 28/1, բն. 6, 041565051 | arakelyanrafayel3@gmail.com | 02318015 |
| 6 | «ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» | ՀՀ, ք. Երևան, Վարդանանց | info@compgarant.am | 00927169 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ՍՊԸ | փակուղի 8, 043660667 | | |
| 7 | «ՕԱԶԻՍ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ» ՍՊԸ | ք. Երևան, Արշակունյաց 194, 098172080, 096699555 | tender@dgcomp.am | 02247256 |
| 8 | «ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ | ք. Երևան, Դավթաշեն, 4-րդ թաղ, 33/1 շենք, տարածք 67, 091403647 | info@comp.am | 00224917 |
| 9 | «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ | Ք.Երևան, Դավիթ բեկի 180/26, 077699551 | h5r.gasparyan@yandex.com | 01096027 |
| 10 | «ՆԵՔՍԱ» ՍՊԸ | ՀՀ, քաղաք Երևան, Գրիգոր Լուսավորիչ 7, '094281096 | yerevan332@gmail.com | 02931637 |

2026թ. օգոստոսի 03-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ համակարգի միջոցով գնահատման մեջ ներառված.

1. Հայտերը կազմվել և ներկայացվել են Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան.

2. Ներկայացված հայտերում առկա են Ընթացակարգի հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.

3. Ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ **«China trade» LLC**-ի կողմից ներկայացված հայտում բացակայում են Հավելված 1-ով ներկայացվող «ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*» և Հավելված 1.3-ով ներկայացվող «Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձև» փաստաթղթերը, ինչպես նաև 1-ին չափաբաժնի մասով ներկայացված «Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր» փաստաթղթում «ֆիրմային անվանումը», «ապրանքային նշանը», «մակնիշը», «արտադրողի անվանումը» և «տեխնիկական բնութագիրը» դաշտերում լրացված է «PC», որը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին և անհրաժեշտ է հստակեցնել: Միաժամանակ տվյալ չափաբաժնի մասով Ընթացակարգի հրավերով պահանջվող տեխնիկական բնութագիրն է՝ «Համակարգիչ՝ լրակազմով՝ i5-12/16GB/256GB/KM/24 դյույմ/UPS Համակարգչի իրան (Case) Համակարգչի իրանը պետք է լինի Micro-ATX Mini Tower ձևաչափի, մետաղական կորպուսով և կողային կոփված ապակե վահանակով: Պետք է ապահովի Micro-ATX և Mini-ITX մայրական սալիկների տեղադրման հնարավորություն, ATX ստանդարտի սնուցման բլոկի տեղադրում, արդյունավետ օդափոխություն և ներքին բաղադրիչների անվտանգ տեղադրում: Առջևի վահանակը պետք է ունենա առնվազն 1 x USB 3.0, 1 x USB 2.0, աուդիո մուտք և ելք: Պետք է ապահովի առնվազն 1 հատ 120 մմ նախապես տեղադրված օդափոխիչ, մինչև 250 մմ երկարությամբ տեսաքարտի և մինչև 151 մմ բարձրությամբ պրոցեսորի հովացուցիչի տեղադրման հնարավորություն: Պրոցեսորի հովացուցիչ (CPU Cooler) Պրոցեսորի հովացման համակարգը պետք է նախատեսված լինի Intel LGA1700 հարթակի պրոցեսորների համար: Պետք է լինի օդային հովացման տիպի, ալյումինե ռադիատորով և PWM ավտոմատ պտույտների կառավարման հնարավորությամբ: Պետք է ապահովի պրոցեսորի կայուն ջերմային ռեժիմ և ցածր աղմուկի մակարդակ երկարատև աշխատանքի ընթացքում: Սնուցման բլոկ (Power Supply) Սնուցման բլոկը պետք է լինի ATX ստանդարտի, հզորությունը՝ ոչ պակաս, քան 600 Վտ: Պետք է

ապահովի համակարգչի բոլոր բաղադրիչների կայուն սնուցում և ունենա գերլարումից (OVP), գերբեռնվածությունից (OPP), գերհոսանքից (OCP) և կարճ միացումից (SCP) պաշտպանության համակարգեր: Պրոցեսոր (CPU) Պրոցեսորը պետք է լինի Intel Core i5-14400 կամ համարժեք: • Միջուկների քանակը՝ ոչ պակաս, քան 10 • Թելերի քանակը՝ ոչ պակաս, քան 16 • Առավելագույն Turbo հաճախականությունը՝ ոչ պակաս, քան 4.7 ԳՀց • Քեշ հիշողությունը՝ ոչ պակաս, քան 20 ՄԲ Intel Smart Cache • Ինտեգրված գրաֆիկական միջուկի առկայություն • Ջերմային փաթեթ (TDP)՝ ոչ ավելի, քան 65 Վտ • Համատեղելիություն՝ Intel LGA1700 Մայրական սալիկ (Motherboard) Մայրական սալիկը պետք է լինի Micro-ATX ձևաչափի և ապահովի Intel LGA1700 պրոցեսորների աջակցություն: • Չիպսեթ՝ Intel H610 կամ ավելի բարձր • Օպերատիվ հիշողության տեսակ՝ DDR4 • Հիշողության բնիկներ՝ առնվազն 2 DIMM • Առավելագույն աջակցվող հիշողություն՝ ոչ պակաս, քան 64 ԳԲ • M.2 PCIe NVMe բնիկ՝ առնվազն 1 հատ • SATA III (6Gb/s) պորտեր՝ առնվազն 2 հատ • PCI Express x16 բնիկ՝ առնվազն 1 հատ • Gigabit Ethernet ցանցային քարտ • USB 3.2 Gen 1 և USB 2.0 պորտերի աջակցություն • HD Audio ձայնային համակարգ Օպերատիվ հիշողություն (RAM) Օպերատիվ հիշողությունը պետք է կազմված լինի 2 (երկու) առանձին DDR4 հիշողության մոդուլներից, յուրաքանչյուրի տարողությունը՝ ոչ պակաս, քան 8 ԳԲ: • Հիշողության ընդհանուր ծավալը՝ ոչ պակաս, քան 16 ԳԲ (2 x 8 ԳԲ): • Հիշողության տեսակը՝ DDR4 UDIMM: • Աշխատանքային հաճախականությունը՝ ոչ պակաս, քան 2666 ՄՀց: • Պետք է ապահովի Dual Channel (երկալիքային) աշխատանքի հնարավորություն: • Համատեղելիությունը պետք է ապահովվի Intel H610 չիպսեթով և Intel LGA1700 հարթակով: • Հիշողությունը պետք է տեղադրված լինի մայրական սալիկի երկու DIMM բնիկներում՝ առավելագույն արտադրողականության ապահովման նպատակով: Կոշտ սկավառակ (SSD) Կուտակիչը պետք է լինի M.2 2280 NVMe PCI Express SSD: • Տարողությունը՝ ոչ պակաս, քան 256 ԳԲ • Ինտերֆեյսը՝ PCI Express 3.0 x4, NVMe • Ընթերցման հաջորդական արագությունը՝ ոչ պակաս, քան 2000 ՄԲ/վ • Գրանցման հաջորդական արագությունը՝ ոչ պակաս, քան 1000 ՄԲ/վ Ստեղնաշար և մկնիկ Հավաքածուն պետք է ներառի լարային ստեղնաշար և լարային օպտիկական մկնիկ: • Միացման ինտերֆեյս՝ USB • Լրիվ չափի (Full-size) ստեղնաշար • Հայերեն և անգլերեն ստեղնաշարային դասավորություն • Մկնիկի զգայնությունը՝ ոչ պակաս, քան 1000 DPI • Plug and Play աջակցություն Անխափան սնուցման սարք (UPS) Անխափան սնուցման սարքը պետք է լինի Line-Interactive տեխնոլոգիայով: • Հզորությունը՝ ոչ պակաս, քան 800 VA / 450 W • Մուտքային լարումը՝ 230V AC • Ավտոմատ լարման կարգավորման (AVR) համակարգ • Պաշտպանություն գերլարումից, լարման անկումից և կարճ միացումից • Ներկառուցված մարտկոցով աշխատանքի հնարավորություն էլեկտրամատակարարման խափանման դեպքում • LED ինդիկատորների առկայություն Մոնիտոր Մոնիտորը պետք է լինի առնվազն 23.8 դյույմ անկյունագծով: • Մատրիցայի տեսակ՝ IPS • Կետայնությունը՝ ոչ պակաս, քան 1920 x 1080 (Full HD) • Էկրանի ձևաչափը՝ 16:9 • Թարմացման հաճախականությունը՝ ոչ պակաս, քան 100 Հց • Արձագանքման ժամանակը՝ ոչ ավելի, քան 5 մվ • Պայծառությունը՝ ոչ պակաս, քան 250 cd/m² • Ստատիկ կոնտրաստը՝ ոչ պակաս, քան 1000:1 • Դիտման անկյունները՝ ոչ պակաս, քան 178°/178° • Մուտքային միակցիչներ՝ առնվազն 1 x HDMI և 1 x VGA • Ներկառուցված բարձրախոսներ • VESA 75 x 75 մմ ամրացման աջակցություն • Low

Blue Light տեխնոլոգիայի աջակցություն • էլեկտրաէներգիայի սպառումը՝ ոչ ավելի, քան 25 Վտ: Երաշխիք՝ 1 տարի:»:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. օգոստոսի 03-ին Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած Մասնակիցների նախնական և վերջնական գնային առաջարկները.

Ներկայացված գնային առաջարկների և Մասնակիցների՝ ընտրված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

| Չ/Հ | Զբաղեցրած տեղ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Կարգավիճակ /լրացվում է հայտերի գնահատման վերջնարդյունքում/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | Ընտրված մասնակից «X» |
| 1 | 1 | «China trade» LLC | 3800000 | 1000000 | 20% | 1200000 | 1000000 | 20% | 1200000 | **Գնահատվել է անբավարար և մերժվել է** |
| 1 | 2 | «ՖԵՆԻՔՍ ՕՆ» ՍՊԸ | 3800000 | 3159777 | 20% | 3791732.4 | 3159777 | 20% | 3791732.4 | |
| 1 | 3 | «ԼԱԳԱ 1820» ՍՊԸ | 3800000 | 3166638 | 20% | 3799965.6 | 3166638 | 20% | 3799965.6 | |
| 1 | 4 | «ԻԶԻԹԵՉ» ՍՊԸ | 3800000 | 3166655 | 20% | 3799986 | 3166655 | 20% | 3799986 | |
| 1 | 5 | «ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊԸ | 3800000 | 3400000 | 20% | 4080000 | 3400000 | 20% | 4080000 | **Մերժված** |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 6 | «ՕԱԶԻՍ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ» ՍՊԸ | 3800000 | 3800000 | 20% | 4560000 | 3800000 | 20% | 4560000 | **Մերժված** |
| 1 | 7 | «ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ | 3800000 | 5000000 | 20% | 6000000 | 5000000 | 20% | 6000000 | **Մերժված** |
| 1 | 8 | «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ | 3800000 | 6630100 | 20% | 7956120 | 6630100 | 20% | 7956120 | **Մերժված** |
| 1 | 9 | «ՆԵՔՍԱ» ՍՊԸ | 3800000 | 250000000 | 20% | 300000000 | 250000000 | 20% | 300000000 | **Մերժված** |
| 2 | 1 | «ՄՄ ՏԵԽ» ՍՊԸ | 90000 | 74990 | 20% | 89988 | 74000 | 20% | 88800 | **X** |
| 2 | 2 | «ՖԵՆԻՔՍ ՕՆ» ՍՊԸ | 90000 | 74777 | 20% | 89732.4 | 74777 | 20% | 89732.4 | |
| 2 | 3 | «ԼԱԳԱ 1820» ՍՊԸ | 90000 | 74972 | 20% | 89966.4 | 74972 | 20% | 89966.4 | |
| 2 | 4 | «ՕԱԶԻՍ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ» ՍՊԸ | 90000 | 90000 | 20% | 108000 | 90000 | 20% | 108000 | **Մերժված** |
| 2 | 5 | «China trade» LLC | 90000 | 100000 | 20% | 120000 | 100000 | 20% | 120000 | **Մերժված** |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | 6 | «ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ | 90000 | 1000000 | 20% | 1200000 | 1000000 | 20% | 1200000 | **Մերժված** |
| 2 | 7 | «ՆԵՔՍԱ» ՍՊԸ | 90000 | 25000000 | 20% | 30000000 | 25000000 | 20% | 30000000 | **Մերժված** |

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

2026թ. օգոստոսի 04-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել Մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2026թ. օգոստոսի 06-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. «China trade» LLC կողմից սահմանված ժամկետներում չեն ներկայացվել հանձնաժողովի կողմից արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2026թ. օգոստոսի 07-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. Համակարգի կողմից գնահատման մեջ ներառված հայտերի գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
3. «China trade» LLC-ի հայտը 1-ին չափաբաժնի մասով գնահատել որպես անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի առաջին մասի 8-րդ կետի 8.11 և 8.15 ենթակետերով սահմանված, ինչպես նաև Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջները:
4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով «China trade» LLC-ի հայտը մերժելու վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի տնօրենին՝ սահմանված կարգով:
5. Ընթացակարգը՝ 1-ին չափաբաժնի մասով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարել չկայացած, հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի առաջին մասի 8-րդ կետի 8.11 և 8.15 ենթակետերով սահմանված պահանջները:
6. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| **Չ/Հ** | **Գնահատման մեջ ներառված մասնակցի անվանումը*** | **Գնահատման արդյունքը** |
|---|---|---|
| 1-ին | «China trade» LLC | անբավարար |

| | | |
|---|---|---|
| 2-րդ | «ՄՄ ՏԵԽ» ՍՊԸ | բավարար |

*Գնահատվում են միայն մասնակիցների կողմից ներկայացված այն հայտերը, որոնք համակարգի կողմից ներառվել են գնահատման ենթակա հայտերի մեջ:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 4. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոնշյալը, 2026թ. օգոստոսի 07-ին Հանձնաժողովը որոշեց, Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և այդպիսին ճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 3-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած Մասնակիցների թվից այն մասնակիցներին, ովքեր ներկայացրել են նվազագույն գնային առաջարկ:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԵՆԵՐԱՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ/ՆԵՐ/Ի և ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Լ. Հայրապետյանը ներկայացրեց գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գնահատումների արդյունքում՝ համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ը:

2026թ. օգոստոսի 07-ին Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել համակարգի միջոցով գեներացվող հայտարարություն/ներ/ը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
2. Հաստատել համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 6. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց համակարգի կողմից տրամադրված պայմանագրերի նախագծերը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել համակարգի կողմից տրամադրված պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,
2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին համակարգի միջոցով ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ սահմանված ժամկետում պայմանագիրը չստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում մասնակիցը կզրկվի պայմանագիրը կնքելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ն. Սուքիասյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Վ. Սանթուրյան ____________

Ա. Երիցյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Լ. Հայրապետյան ____________